4130

281.6
U-81

1895

IV
56-7
3-4

(61)

ԿԱՆՈՆՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ԹԵՄԻ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ

ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ

ԵՒ

ԵՐԵՑՓՈԽԱՆՆԵՐԻ

Հրահանգութեան համար

Սահմանուած թեմական Առաջնորդ

ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՐԷՆԵԱՆԻՑ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

281.6
Ս-81

ՏՓԽԻՍ
Տպարան Մ. Շարաձէի, Նիկ., 21.
Тип. М. Шарадзе, Ник., 21.
1895

2010

280
1013-ՍՌՆ
281.6
Ս-81
39505-Վ.Լ.
1005
20403
Հ0038-59

ԿԱՆՈՆՔ

Վասն Գործակալաց եկեղեցեաց Հայոց Տփխիսի և վիճակի նորին, տուեալք 'ի Թեմական Առաջնորդէ Հայոց Վրաստանի և Իմերէթի Գէորգ Արքեպիսկոպոսէ Սուրէնեանց։

1.

Վասն մերձաւորապէս և մշտապէս դիտելոյ և վերահասու լինելոյ թերութեանց եկեղեցեաց և եկեղեցականաց կարգին Գործակալք ըստ պիտոյից վիճակին. իսկ վասն քաղաքին Տփխիսոյ և մերձակայ գիւղօրէից կրկին են Գործակալք, որք և անուանին «Գործակալ եկեղեցեաց Հայոց ա. մասին Տփխիսոյ» և «Գործակալ եկեղեցեաց Հայոց բ. մասին Տփխիսոյ». երկոքին ևս ունին կնիք ընդ նոյն վերտառութեամբ։

2.

Գործակալին առաջնոյ մասին Տփխիսոյ յանձն լինին եկեղեցիք քաղաքիս՝ Վանաց, Կաթուղիկէ Ս. Աստուածածնի, Մուղնւոյ Ս. Գէորգայ, Աւետեաց Ս. Աստուածածնի, Նորաշէն Ս. Աստուածածնի, Բեդղեհէմ Ս. Աստուածածնի, Ս. Նշանի, Տափի թաղի Ս. Գէորգայ (Քամոյենց), Ջրկինենց Ս. Կարապետի, Ս. Սարգսի, Հրեշտակապետաց, Քարափի Ս. Գէոր-

գայ, Վերայի Ս. Խաչ, Կուսանաց Ս. Ստեփաննոսի, Ծիրանաւորի Ս. Աստուածածնի և գիւղօրէից՝ Շուինդիսի, Տաբախմելի, Կոշոռի, Ծաւկիսի, Օքրողանայի, Ծղնէթի, Նախշիրգօրի, Լիսի, Դիզումի, ՎէՀիսի և Ծոգորէթի, իսկ Գործակալին երկրորդ մասին Տփխիսոյ՝ եկեղեցիք՝ Կուկիոյ Թանդոյենց, Կուկիոյ Նորաշէն Ս. Աստուածածնի, Զուղուրէթի Ս. Աստուածածնի, Ս. Կարապետի, Ս. Մինասի, Էջմիածնեցւոց Ս. Գէորգայ, Շամքոռեցւոց Ս. Աստուածածնի, Ձորաբաշի Ս. Գէորգայ, Լուսաւորչի, Նաւթլուխի Ս. Գէորգայ, Խօջիվանից Ս. Աստուածածնի և գիւղօրէից՝ Սարթիսճալայի, Նորիոյի, Մարտղոփի, Ախալսոփելի, մեծի և փոքու Լիլօյից, մեծի և փոքու Հաւճալայից, Գլդանի, Սագուրամօի, Նադախտարի և Մցխէթի։

ՊԱՐՏԻՔ ԳՈՐԾԱԿԱԼԱՑ

3.

Գործակալի պարտք են յաճախակի յայց ելանել ընդ տեսչութեամբ իւրով եղեալ եկեղեցեաց քաղաքիս և գիւղօրէից և հսկել աչալրջութեամբ 'ի վերայ պաշտօնավարութեանց առհասարակ բոլոր դասու հոգևորականաց, թէ յեկեղեցւոջ և թէ արտաքոյ նորին, զի ամենայն պաշտօնեայք եկեղեցւոյ արիապէս կատարեսցեն զսպասահարկութեան պաշտամունս իւրեանց և զթերութիւնս նոցա ուղղել սիրոյ և համեստ յորդորմամբ և պահպանել զբարեկարգութիւն եկեղեցիս։

4.

Գործակալն պարտի հսկել, զի քահանայք, սարկաւագունք և դպիրք անխափան յաճախեսցեն յեկեղեցիս, զի ժամերգութիւնք յեկեղեցիս կատարեսցին արժանաւոր վեհութեամբ և պատշաճաւոր եղանակաւ և զի յամենայն եկեղեցիս պահպանեսցի միակերպութիւն տօնից և ծիսից ըստ կանոնաց և նախնաւանդ սովորութեան Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցւոյ։

5.

Գործակալի պարտք են հոգալ, զի ամենայն եկեղեցիք ունիցին զամենակարևոր սրբազան անօթս, զգեստս և զարդս, նոցս և մաքուրս, զկրօնական և զաստուածպաշտական գրեանս, պահպանել զայնս խնամովք և լնուն զթերիս։

6.

Գործակալն պարտի դարձուցանել զուշադրութիւն 'ի նկարեալ տէրունական և սրբոց պատկերս եկեղեցեաց և զկնի օծմամբ սրբագործելոյ զայնս 'ի Սրբազան Առաջնորդէն՝ տալ զետեղել զիւրաքանչիւրն 'ի յարմարաւոր տեղւոջ։

ԾԱՆՕԹ. Տէրունական և սրբոց պատկերք ըստ աւանդութեան Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ պարտին լինել նկարեալ 'ի վերայ կտաւոյ։

7.

'Ի նկատելն Գործակալին զթերութիւնս կամ զվտանգ ինչ 'ի շինուածս եկեղեցեաց՝ յայտ առնէ Թեմական Առաջնորդին։

8.

Գործակալի պարտք են դիտել և հսկել 'ի վերայ կենցաղավարութեան բոլոր դասու հոգևորականաց, զի նոքա ունիցին համաձայն կոչման իւրեանց զբարի, պարկեշտ և խոհեմ վարս և զի օրինակ բարեաց հանդիսասցին նոքա ժողովրդեան անբամբաս վարուք թէ յեկեղեցիս և թէ արտաքոյ նորին։

9.

Գործակալն պարտ է վերահասու լինել, զի զՍ. Հաց Պատարագին գործեսցեն սարկաւագունք և դպիրք աղօթիւք և սաղմոսերգութեամբ 'ի ժամատան և 'ի ժամուն մատուսցեն զՋերմ Հաց ընդ անապակ Գինւոյ 'ի սեղան։

10.

Գործակալի պարտք են պարտաւորել զբոլոր քահանայս, զի Մասունք Կենարար Մարմնոյ և Արեան Տեառն 'ի մասնատուփս լիցին նորք և զկնի աւուրց եօթնից նորոգել։

11.

Գործակալն հսկէ, զի քահանայք զՍ. խորհուրդ մկրտութեան կատարեսցեն յեկեղեցւոջ և մի 'ի տան. բացառութիւն 'ի կանոնաց թոյլատրեալ լինի միմիայն 'ի դէպս յարգելի և ստիպառիթ պատճառաց։

12.

Գործակալն վերահասու լինի ուղիղ և կանոնաւոր արձանագրութեանց չափաբերական մատենից եկեղեցեաց, 'ի վերջ իւրաքանչիւր ամի ստուգէ զայնս, տայ արտագրել զհարազատ պատճէնս նոցին, զորս և ստորագրութեամբ միաբանից իւրաքանչիւր եկեղեցւոյ տայ 'ի պահպանել յեկեղեցիս։

13.

Յաւուրս մեծահանդէս տօնից Կայսերականաց և յամենայն հանդիսաւոր ծիսակատարութիւնս Գործակալն դիտէ, զի բոլոր դասք հոգևորականաց 'ի ժամուն ներկայ գտցին 'ի տեղի հանդիսակատարութեան։

14.

Գործակալն տնօրինէ զարժանն և վասն նշանաւոր յուղարկաւորութեանց, զի եկեղեցական զարդք լիցին բարեվայելուչք, զգեստք եկեղեցական պաշտօնէից պատշաճաւորք, զի քահանայք կանգնեսցին յեկեղեցիս ցաւարտ պատարագի և մի ելցեն արտաքս 'ի շրջել կամ ի զբօսնուլ։

15.

Գործակալն դիտէ, զի ժամերգութիւնք յամենայն եկեղեցիս սկսցին 'ի միում ժամու, ըստ տուեալն առ այն հրահանգութեան և զի ահաւոր խորհուրդ ս. Պատարագի և ժամերգութիւնք յեկեղեցիս կատարեսցին ջերմեռանդութեամբ և ներդաշնակ երգեցողութեամբ, զթերութիւնս անձամբ ուղղել և յանհնարին դէպս յայտ առնել թեմական իշխանութեան։

16.

Գործակալն ունի զհսկողութիւն, զի իւրաքանչիւր քահանայ ինքնին պատարագեսցէ 'ի հերթս իւր, իսկ 'ի դէպս անկարելութեան՝ փոխանակեսցեն այլ քահանայք։

17.

Գործակալն պարտաւոր է հսկել, զի 'ի հինգ նաւակատեաց մեռելոցս օտարական քահանայք մի՛ երևեսցին ընաւ 'ի հանգստարանս քաղաքաց։

18.

Նորին պարտք են հսկելոյ, զի օտար ոք 'ի հայ վարդապետաց կամ կրօնաւորաց, ռուսաստանեայն պարտի ունիլ զանցագիր Հոգևոր ծայրագոյն իշխանութեան կամ թեմական Առաջնորդի իւրաքանչիւր վիճակի, իսկ որ 'ի Տաճկաստանէ իցէ՝ զյանձնարարագիր ս. Պատրիարքի, Կրօնական ժողովոյ

կամ վիճակաւոր Առաջնորդի իւրեանց։ Որպէս սոքա, սոյնպէս և կրօնաւորք վանօրէից վիճակիս չունին զիրաւունս կրելոյ զփիլոն և կատարել զորևէ պաշտօն առանց թոյլտուութեան թեմական Առաջնորդի։

19.

Ի դէպս անբաւականութեանց, ծագելոց ի միաբանութիւնս եկեղեցեաց, Գործակալն իսկոյն ի հաշտութիւն հրաւիրէ զնոսա և վճռէ զմասնաւոր խնդիրս և անբաւականութիւնս նոցին, իսկ եթէ անլուր մնասցեն յորդորանաց նորա, որպէս նաև զկարևոր անցից՝ յայտ առնէ թեմական իշխանութեան։

20.

Գործակալի պարտք են ներկայ գտանիլ ի ժամ ընտրութեան երեցփոխանաց և հաշուատեսաց եկեղեցեաց քաղաքիս և յանձնեցեալ ինքեան գիւղօրէից, և հսկել, զի ընտրութիւնք լիցին կանոնաւորք ըստ տուեալ առ այն հրահանգաց և ընտրեալքն արժանահաւատ անձինք և ոչ երբէք անկեալք ընդ դատաստանաւ և ընդ տուգանօք, կամ յայտնեալք նախկին պաշտօնավարութեամբ իւրեանց իբրև անօգտակարք։

21.

Ի յանձնելն զպատկանելութիւնս եկեղեցւոյ նորոգ երեցփոխանին՝ Գործակալն պարտի ներկայ գտանիլ և տալ ճշտութեամբ ցուցակագրել զկայս եկեղեցւոյ և զմի օրինակ ցուցակին ստորագրութեամբ յանձնողի, ստացողի և իւր առաջի առնել թեմական Ատենին, յայտնելով և զկորստենէ եկեղեցական զարդուց, անօթոց կամ գումարաց։

22.

Գործակալի պարտք են ի ժամ կառուցման եկեղեցեաց և նորոգութեանց նոցին ներկայ գտանիլ ընդ երեցփոխանաց և հոգաբարձուաց շինութեան, իբրև պատգամաւոր ի կողմանէ հոգևոր իշխանութեան և լինել գործակից նոցին և խորհրդակից։

23.

Գործակալն ստանայ զԱթոռահաս և զվիճակապատկան արդիւնս և մատուցանէ թեմական Ատենին։

24.

Գործակալն կազմէ զերգեցիկ խումբ դպրաց վասն հանդիսաւոր ծիսակատարութեանց և հսկէ, զի մի՛ ոք իշխեսցէ կազմել զնոյնպիսին առանց թոյլտուութեան հոգևորն իշխանութեան։

25.

Գործակալին յանձն լինի ունել զխիստ հսկողութիւն, զի պաշտօնեայք եկեղեցւոյ ագանիցին զպատշաճավայել ՝կոչման իւրեանց զգեստս ՝ի ներքուստ և յարտաքուստ, վասն քահանայից և սարկաւագաց ստհմանի՝ վերարկու և լոդիկ պարզ, ևս և բաճկոնն համեստ, գլխարկ վայելուչ կոչման հոգևորականի. արդելի խստիւ արկանելն զշալ. ջահընկալ դըպիրք պարտաւոր են կրել զհոգևորական հանդերձ։

ԻՐԱՒՈՒՆՔ ԳՈՐԾԱԿԱԼԱՑ։

26.

Ի դիտելն Գործակալին, զի սրբազնագործ պաշտօնեայք եկեղեցւոյ առանց յարգելի պատճառի սովորութիւն կալեալ բացակային ստէպ յեկեղեցւոյ և ընդհանրապէս անփոյթ գը-

տանին զպարտականութեամբք իւրեանց, խրատեսցեն զնոսա և զգուշացուսցեն միանգամ երկիցս և երիցս, իսկ եթէ անուն-կնդիր գտցին և 'ի նոյն յարատևեսցին, իրաւունք են Գործակալին, հայելով 'ի ծանրութիւն զանցառուին, հանել իբրև տուգանս զմասն ինչ յարդեանց նորա և առաքել առ Հոգևորն իշխանութիւն, գրաւոր զեկուցմամբ իւրով։ Եթէ այդպիսի միջոց անզօր իցէ առ ցանկալին նպատակ՝ յայտնէ թեմական Առաջնորդին։

Իսկ եթէ այդպիսիք 'ի ստորին եկեղեցական պաշտօնէից իցեն, ինքնին, 'ի նկատի առեալ զչափ յանցաւորութեան, խրատէ, յանդիմանէ, զրկէ 'ի գանձանակագրամոց և կամ 'ի պահանջել հարկին ժամանակաւորապէս հեռացուցանէ յեկեղեցւոյ և յայտ առնէ զայսմանէ թեմական Ատենին։

27.

'Ի հանդէս իւրաքանչիւր յուղարկաւորութեան, ուր հրաւիրեալ լինին առնուազն տասն քահանայք, ծխատէր քահանայն հրաւիրէ անշուշտ զգործակալն 'ի պահպանել զշուք և զկարգ հանդիսին։

28.

Գործակալն ունի զիրաւունս տալ զեօթնօրեայ արձակուրդ իւրով անցագրով հոգևորականաց, բացակայելոց ցՅՕ վերստ հեռաւորութեամբ 'ի քաղաքէս։

Թեմական Առաջնորդ Հայոց Վրաստանի և Իմերէթի՝

Գէորգ Արքեպիսկոպոս Սուրէնեանց.

ԿԱՆՈՆՆԵՐ

Վրաստանի և Իմերէթի թեմի Հայ եկեղեցիների երեցփոխանների հրահանգութեան համար, սահմանուած Թեմական Առաջնորդ Գէորգ Արքեպիսկոպոս Սուրէնեանցից։

1.

Ռուսաստանի Հայոց եկեղեցիների գոյքի կառավարութեան ընդհանուր վերահսկողութիւնը պատկանում է Ծայրագոյն Հոգևոր Իշխանութեան իրաւասութեան, իսկ իւրաքանչիւր թեմում՝ վիճակաւոր Առաջնորդին։ (Հատոր օրինաց XI մասն 1, յօդ. 1021)։

2.

Վիճակաւոր Առաջնորդը իրաւունք ունի միշտ ստուգել անձամբ կամ իւր կողմից նշանակուած բարեյոյս հոգևորական անձի ձեռքով՝ եկեղեցական դրամների, զարդերի, անօթների և անշարժ կալուածների ամբողջութիւնը (նոյն, յօդ. 1021). ինչպէս նաև վերահասութիւն գործել և ստուգել հաշուապահութեան կանոնաւորութիւնը հոգևորական կամ աշխարհական անձանց միջոցով։

3.

Եկեղեցական գոյքի մասնաւոր կառավարութիւնը պատկանում է անընդմիջապէս իւրաքանչիւր եկեղեցու երեցփոխանին (նոյն, յօդ. 1024), որի գործողութեանց վերայ հսկում են բացի հոգևոր իշխանութիւնից, նաև ծխականներից ընտրուած հաշուատեսները և ծխականաց ժողովը։

4.

Նռամեայ ծառայութեան ժամանակը լրանալուց յետոյ երեցփոխանը կարող է վերընտրուել նոյն պաշտօնին, եթէ նորա գործունէութիւնը համապատասխան է եղած եկեղեցու շահերին. (նոյն, յօդ. 1026)։ Երեցփոխանը պարտաւոր է իւր պաշտօնավարութեան ժամանակը լրանալուց երեք ամիս առաջ յայտնել այդ մասին վիճակային իշխանութեան։

5.

Հայոց եկեղեցիների երեցփոխանները ինամեայ յօգուտ եկեղեցու հաւատարիմ և արդիւնաւէտ ծառայութիւնը լրացնելուց յետոյ վարձատրւում են դորա համար սահմանուած կարգով (նոյն, յօդ. 1032)։

6.

Ամեն մի հայ եկեղեցում պէտք է պահուի կանոնաւոր մատեան, որի մէջ ճիշտ և մանրամասն պէտք է արձանագրուին եկեղեցական բոլոր անշարժ կայքերը, անօթները և այլ իրերն ու դրամները, նոյնպէս և նոյն եկեղեցուն պատկանեալ բոլոր եկամուտները. բացի դորանից իւրաքանչիւր եկեղեցուն տրւում է օրինաւոր ժապաւինեալ մատեան՝ եկեղեցու դրամական բոլոր մուտքն ու ծախքը գրելու համար։ (նոյն, յօդ. 1025)։

7.

Հայոց եկեղեցիների երեցփոխանները ընտրւում են պատուաւորագոյն ծխականներից այնպիսիները, որոնք իրանց բարեխիղճ գործունէութեամբ գրաւած են հասարակութեան համակրութիւնը. երեցփոխաններն ընտրւում են եռամեայ ժամանակով և նոցա, հաստատելուց յետոյ, յանձնւում է վերը յիշած մատեանը, որի մէջ օրինաւոր կերպով արձանագրուած են եկեղեցու շարժական և անշարժ գոյքը և վաւերացուելով հին և նոր երեցփոխանների յանձնողական և ստացողական ստորագրութիւններով՝ վերջիններս այդ մասին իրանց ստորագրութեամբ յայտարարում են թեմական Ատենին վաւերական ցուցակի հետ։ (Նոյն, յօդ. 1021 և 1027)։

8.

Երեցփոխանը պարտաւոր է վերահասու լինել իրեն յանձնուած եկեղեցական գոյքին, հոգալ եկամուտները ստանալու մասին, դիմել պատշաճաւոր Ատենատեղերը եկեղեցական գործերի վերաբերմամբ, ծխականների գրաւոր հաւանութեամբ և Հոգևոր իշխանութեան լուծմամբ շինութիւններ և վերանորոգութիւններ անել, եկեղեցապատկան շինութիւններ վարձու տալ և այլն։ (Նոյն. յօդ. 1028)։

9.

Երեցփոխանը ծխականների ժողովից առաջարկուած և Հոգևոր իշխանութեան կողմից հաստատուած նախահաշուով հոգում է եկեղեցու առօրեայ ծախքերը եկեղեցական գումարներից, այն է՝ լուսարարի, դպիրների, ժամհարի և երգեցիկ խմբի ռոճիկները, մոմի, խնկի, աճուխի և նաւթի գինը, կալուածների ապահովութեան վարձը, գետնահարկը, ծխական դպրոցի պահպանութեան մասնադրամը և այլն. բացի սոցանից երեցփոխանը եկեղեցական դրամով նորոգում է եկեղեցապատկան կալուածները, ծախսելով միանուագ երե-

սուն ռուբլի։ Աւելի ծախքի համար Հոգևոր իշխանութիւնից լուծումն է խնդրում. զանցառուն իւր գոյքով պատասխանատու է Հոգևոր իշխանութեան առաջ։ (Ս. Էջմիածնի Սինոդի հրամաններ՝ նոյեմբ. 23 1857 թ. № 2337 և յունուար 30, 1859 թ. № 95)։

10.

Երեցփոխանը իրաւունք չունի առանց Կոնսիստորիայի լուծման ոչ եկեղեցու հին կալուածները վաճառել և ոչ յոգուտ եկեղեցու նոր կալուածք գնել։ (Հատ. օր. XI մասն 1, յոդ. 1011 և 1012)։

11.

Երեցփոխանը պարտաւոր է եկեղեցական գումարները գնել արքունի կամ հասարակական դրամատները եկեղեցու անունով շահեցնելու և կամ գնել պետական կամ պետութիւնից ապահովացրած տոկոսաբեր թղթեր։ Միանգամայն արգելւում է այդպիսի գումարները մասնաւոր անձերին և հաստատութիւններին յանձնել։ (Նոյն. յոդ. 1023)։ Բոլոր դրամական աւանդները դրւում են դրամատանը և հանւում թեմական իշխանութեան կանխագոյն լուծմամբ։

12.

Երեցփոխանը իւր բացակայութեան դէպքում իւր պաշտօնը կարող է մինչև վերադարձը յանձնել բարեյոյս մարդուն իւր յատուկ պատասխանատուութեամբ, որի մասին անմիջապէս գրով յայտնում է վիճակային Կոնսիստորիային։

13.

Երեցփոխանը պարտաւոր է մեղրամոմը մոմավաճառութեան աւագ պահարանից գնել, որի պայմանագրի տպած օրինակը վիճակային Կոնսիստորիայն յանձնում է իւրաքան-

չիւր երեցփոխանին 'ի հրահանգութիւն. երեցփոխանն իրաւունք չունի նորա հակառակ վարուել, որովհետև պարտադիր է այն բոլոր եկեղեցիների համար։

14.

Երեցփոխանը իրաւունք չունի եկեղեցու անգործադրելի զգեստներն ու անօթները ինքնակամ վաճառել, փոխանակել կամ ընծայել, այլ պարտաւոր է այդպիսիների ճիշտ ցուցակն առաջարկել վիճակային Կոնսիստորիային 'ի տնօրէնութիւն։

15.

Եկեղեցական կալուածների կապալատուութիւնն և աճուրդը լինում է վիճակային Կոնսիստորիայի նախընթաց լուծմամբ։

16.

Երեցփոխանը պարտաւոր է անմիջապէս արձանագրել ժապաւինեալ մատենի մէջ եկեղեցու մուտք ու ծախքը, իւր ստորագրութեամբ բոլոր յոգուածների տակ և դրամները ստացողների ստորագրութեամբ ծախուց յոգուածների տակ կամ առանձին ստացագրով։

17.

Իւրաքանչիւր եկեղեցու համար նոյն իսկ երեցփոխանի ընտրութեան օրը ընտրւում են երեք հաշուատեսներ եռամեայ ժամանակով, որոնք իրանցից մէկին նախագահ ընտրելով իւրաքանչիւր ամսի սկզբին ու պահանջած դէպքում յանկնկալս զննում են եկեղեցու հաշիւները. իսկ գործակալը իբրև Առաջնորդի ներկայացուցիչ իրաւունք ունի միշտ ստուգել երեցփոխանի հաշիւները և նշանակել մատենում ստուգութեան օրը։

18.

Երեցփոխանը պարտաւոր է մինչև յունուարի վերջը ներկայացնել հաշուատեսներին նախորդ տարուայ հաշիւը. հաշուատեսների յանձնաժողովը պարտաւոր է քննել այդ հաշիւները մի ամսուան ընթացքում՝ որից յետոյ երեցփոխանը ներկայացնում է ծխականների ընդհանուր ժողովին և վերջինիս որոշումը մատենի հետ միասին առաջարկում է վիճակային Կոնսիստորիային։

19.

Երեցփոխանը պարտաւոր է ճշտութեամբ կատարել իւր պարտաւորութիւնները և չմիջամտել հոգևոր գործերի մէջ և հոգևորականների պաշտօնավարութեանց սահմանը, թէ եկեղեցում և թէ դուրսը. այլ միմիայն վարում է եկեղեցու տնտեսական կառավարութիւնը պետական օրէնքների և Հոգևոր իշխանութեան հրահանգութեանց համեմատ։ Իսկ եթէ նա նկատում է որևէ թերութիւն եկեղեցական պաշտօնեաների վերաբերմամբ՝ անմիջապէս յայտնում է Հոգևոր իշխանութեան։

ԾԽԱԿԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ.

20.

Այն դէպքերում, երբ, ըստ կանոնադրութեանս, կարևոր է ծխականների հաւանութիւնը ստանալ, երեցփոխանը պարտաւոր է ծխականներին ժողով հրաւիրել աւագ կամ ժամօրհնող քահանայի նախագահութեամբ. իսկ քահանայից բացակայութեան դէպքում ժողովն ինքը իւր համար ընտրում է նախագահ։

21.

Ծխականները հրաւիրւում են ժողով ըստ յարմարութեան՝ հրաւիրատոմսերով կամ յայտարարելով լրագիրների մէջ։

22.

Եթէ ժողովը չկայանայ ծխականների օրինական թուի պակասութեան պատճառով, այն է ընդհանուր թուի $^1/_5$-ից ոչ պակաս, հրաւիրւում է երկրորդ ժողով, երկրորդ ժողովի որոշումները վաւերական են, որքան անդամ էլ ներկայ լինի այդ ժողովին։

23.

Ժողովում խնդիրները վճռւում են ձայների առաւելութեամբ, բացարձակ կամ գաղտնի քուէարկութեամբ—տուփերով։ Գաղտնի քուէարկութիւնը պարտաւորական է, եթէ ժողովականներից առնուազն երեք հոգի պահանջեն։

24,

Ժողովի որոշումները նախագահի միջոցով առաջարկւում են թեմական իշխանութեան և երբ սորանից հաւանութիւն գտնեն՝ պարտաւորական են երեցփոխանի համար։ Եթէ ժողովը դրամական պահանջ է լինում դրած երեցփոխանի վերայ և Հոգևոր իշխանութիւնը վաւերացնում է այդ վճիռը՝ այնուհետև երեցփոխանին թոյլ է տրւում բողոքել թեմական իշխանութեան մի ամսուան ընթացքում, վերջինս նոր ժողով հրաւիրելով՝ առաջարկում է քննել բողոքը և իւր որոշումը տալ և այս վճիռը վախճանական վաւերացման ենթարկուելով Հոգևոր իշխանութիւնից՝ պարտադիր է դառնում երեցփոխանի համար։

25.

Եթէ երեցփոխանը իդ. յոդուածում յիշուած որոշում-

ները չկատարէ և կամ իւր ժամանակին չբողոքէ, նա պարտաւոր է երեցփոխանական հաշիւները, գոյքն ու գործերը անմիջապէս յանձնել աւագ կամ ժամօրհնող քահանային օրինաւոր ցուցակով և հեռանալ պաշտօնից, և այնուհետև պահանջի կատարումն անցնում է կոնսիստորիային, որին քահանայ—երեցփոխանը անյապաղ յայտնում է բոլոր եղելութիւնը։

26.

Այդպիսի դէպքում Կոնսիստորիայն ստանալով երեցփոխան քահանայի յայտարարութիւնը, տնօրինում է կատարել նոր երեցփոխանի ընտրութիւն։

Թեմակալ Առաջնորդ Հայոց Վրաստանի և Իմերէթի՝

Գէորգ Արքեպիսկոպոս Սոդրէնեանց.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
именна Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0030994

3993